

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/1

16 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Գեղեցիկ Քնար» ԱԿ 19.05.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 27.04.2015 թ-ի թիվ 6104127 ակտի դեմ:

#### **«Գեղեցիկ Քնար» ԱԿ բողոքում բերված փաստարկները.**

Համաձայն Կապանի ՏՀՏ պետի 05.03.2015թ. թիվ 6104127 հանձնարարագրի «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության և հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգումներ, որի արդյունքում 11.04.2015թ. կազմվել է թիվ 6104127 ակտի նախագիծը, որի վերաբերյալ սահմանված կարգով ներկայացվել են առարկություններ, սակայն առանց դրանք հաշվի առնելու 27.04.2015թ-ին կազմվել է թիվ 6104127 ակտը:

Ստուգման ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ հետևյալ պատճառաբանությամբ:

Ակտի 2-րդ կետում նշվել է, որ 01.04.2015թ. կոուպերատիվի խանութներում կատարվել են որոշակի գնումներ:

Կարծում եմ, որ ստուգող անձինք իրավունք չունեին նման գնումներ կատարելու, քանի որ դրանք կարող էին կատարվել միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով սահմանված՝ հարկային մարմնի կողմից հսկիչ գնումներ կատարելու միջոցով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսվարող սուբյեկտի մոտ գնում կատարելու այլ կարգ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ:

ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված է հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը (այսուհետ՝ Կարգ):

Կարգի 1-ին կետի համաձայն այդ կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման գործընթացը:

Կարգի 3-րդ կետով նախատեսված են կանխիկ հսկիչ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման աղբյուրները:

Վերը նշվածից հետևում է, որ տնտեսվարողի մոտ գնումներ կատարելիս համապատասխան դրամական միջոցները պետք է ստացված լինեն նշված կարգով սահմանված ձևով:

Տվյալ դեպքում հայտնի չէ, թե ստուգման ակտում հիշատակված գնումները ինչ միջոցների հաշվին են կատարվել:

Պետք է նշել նաև, որ ստուգման ընթացքում կոուպերատիվի խանութներից «առգրավվել են» (այս տերմինը կարող էր օգտագործվել միայն քրեական օրենսգրքով նախատեսված գործողությունների ժամանակ) ոչ միայն ցուցադրված ապրանքները, այլ նաև չցուցադրված մի շարք ապրանքներ, ինչով որ խախտվել են Առևտրի և ծառայությունների մասին օրենքի պահանջները:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-20-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00, 3304, 3305, 3401, 3402 ապրանքային խմբերին դասվող ապրանքների) իրացնող անձանց կողմից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ստուգողների կողմից չեն պարզվել, թե կոոպերատիվի խանութներից առգրավված ապրանքները ձեռք են բերվել մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը, թե դրանից հետո:

Քանի որ օրենքում որևէ բան ասված չէ 2014 թ-ի հոկտեմբերի 1-ից հետո ձեռք բերված ապրանքների մասին, ուստի չափազանց կարևոր էր պարզաբանել, թե առգրավված ապրանքները կոոպերատիվի կողմից երբ են ձեռք բերվել:

Կից ներկայացվում են նաև ակտի անվավերությունը հիմնավորող այլ ապացույցներ.

1. Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգումը կատարվել է 01.03.2015 թ-ից մինչև 10.04.2015 թ-ը: Սակայն ստուգումը կատարվել է հիմք ընդունելով Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքը, մինչև վերջինիս ուժի մեջ մտնելու ժամանակահատվածում:

2. Կատարվել է ստուգում, առանց ստուգումն իրականացնող անձանց լիազորությունների առկայության, քանի որ ստուգման հանձնարարագիրը ներկայացվել է տնտեսվարող սուբյեկտին փոխանինող պաշտոնատար անձ՝ կոոպերատիվի գլխավոր հաշվապահ Ա.Առաքելյանին ստուգումն կատարվելուց, ապրանքները առգրավվելուց հետո միայն ժամեր անց: Այսինքն, ստուգման ընթացքում, որի ժամանակ կատարվել են հսկիչ գնումներ, առգրավվել են ապրանքներ, փաստացի ստուգողները գործել են առանց նման լիազորությունների առկայության, քանի որ թե ստուգումից առաջ, թե ստուգման ընթացքում սահմանված կարգով ստուգման հանձնարարագիր չի ներկայացվել: Հանձնարարագրի ուշ ներկայացնելը ապացուցվում է կոոպերատիվի 4 հասցեներում գտնվող վաճառողների բացատրություններով, ինչպես նաև հետևյալ կերպ՝ ըստ ստուգման ակտին կցված գնումների դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնների, գնումները բոլոր 4 խանութներում կատարվել են միաժամանակ, իսկ քանի որ կոոպերատիվի 4 խանութները գտնվում են տարբեր փողոցներում՝ իրարից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, անգամ ցանկության դեպքում հնարավոր չէր հանձնարարագիրը միաժամանակ ներկայացնել բոլոր 4 խանութներում:

3. ՀՀ Սահմանադրությունը, Քաղաքացիական օրենսգիրքը, Քրեական օրենսգիրքը, ՎԻՎ օրենսգիրքը և այլ օրենսդրական ակտեր սահմանում են այն դեպքերը, երբ գույքը կարող է վերցվել սեփականատիրոջից: Իր հերթին, ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը թույլատրում է ժամանակավորապես վերցնել միայն ստուգման նպատակների հետ անմիջականորեն առնչվող իրեր, այն դեպքում, երբ հանձնարարագրով այդ թույլտվությունը առկա չէ, իսկ ապրանքների առգրավման արձանագրություններում չկա գրառում ժամանակավորապես ապրանքները վերցնելու և դրանց վերադարձման ժամկետների մասին: Իր հերթին արձանագրությունների մեկական օրինակները չեն

հանձնվել տնտեսվարող սունյեկտի ղեկավարին կամ փոխարինող պաշտոնատար անձին: Ընդ որում, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք դրանք վերցրել են ոչ թե ապրանքների սեփականատիրոջից, այլ՝ վաճառողներից, որի արդյունքում խախտվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իմ իրավունքները:

4. Ստուգողները տնտեսվարող սուբյեկտի փոխարինող պաշտոնատար անձին չեն ներկայացրել ակտին կցված ապրանքների առգրավման և հայտարարություններ վերցնելու մասին արձանագրությունները, որը ապացուցվում է այն հանգամանքով, որ դրանց վրա բացակայում են գրառումներ տնտեսվարող սուբյեկտի փոխարինող պաշտոնատար անձի ստորագրելուց հրաժարվելու մասին: Արձանագրություններում չեն նշվել նաև տեղեկություններ խախտողի անձի մասին, այն նորմատիվ ակտի մասին, որը պատասխանատվություն է սահմանում տվյալ իրավախախտման համար, խախտողի բացատրությունը, նրան իր իրավունքների և պարտականությունների մասին ծանոթացնելու մասին և այլն:

5. Պետք է նշել նաև, որ 4-րդ արձանագրությունը փակված (ամբողջական) չէ, սակայն ստուգողները վաճառողուհուն ստիպել են, որ այն ստորագրվի: Այսինքն, այդ արձանագրությունում կարող էր ավելացվել ցանկացած բան և որպես խախտման փաստ ներկայացվեր կոպերատիվին:

6. Ստուգման ակտն առվոչինչ ակտ է, քանի որ դրանով չի սահմանվում, թե դրա հասցեատիրոջ վրա ինչ պարտականություններ և իրավունքներ են սահմանվում, հիմք՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետը:

7. Խախտվել են Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի, 4-րդ մասի ե), գ) և ը) կետի դրույթները:

8. Ակտում պետք է նշվեին իրավական այն նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել, որոնք սակայն բացակայում են:

9. Ստուգման ակտին և ակտի նախագծին կցվել են թվով 4 արձանագրություններ այն մասին, թե իբր վաճառողները հրաժարվել են ապրանքների ձեռք բերման վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնել և հրաժարվել են հայտարարություններ տալ այդ մասին: Իրականում նման բան տեղի չի ունեցել, որը ապացուցվում է բողոքին կից ներկայացվող չորս վաճառողների հայտարարություններով: Ասվածը հիմանավորվում է նաև այն հանգամանքով, որ ստուգման ակտում և ակտի նախագծում նշված է, որ դրանց կցվում են ակտի անբաժանելի մաս հանդիսացող ՀԴՄ կտրոնների պատճենները և արձանագրությունները ընդամենը 18 թերթ, սակայն իրականում դրանց կցվել է 22 թերթ՝ նպատակ ունենալով ստուգման ակտը հիմնավորել թվով 4 կեղծ արձանագրություններով:

10. Ապրանքների առգրավման արձանագրություններում չեն նշվել, թե դրանք վաճառատարի որ մասից են վերցվել, իսկ ստուգման ակտում չի ապացուցվել, որ ապրանքները գտնվել են գնորդների համար տեսանելի վայրում: Այս կապակցությամբ հայտնվում է, որ անհնար է մեր կոպերատիվի նման փոքր խանութներում վաճառքի ենթակա բոլոր ապրանքները ցուցադրել գնորդի համար տեսանելի վայրում, քանի որ որպես կանոն խանութներում ապրանքները ցուցադրվում են մեկական օրինակով, իսկ մնացած ապրանքները գտնվում են ցուցափեղքերի տակ: Այս հանգամանքը հիմնավորվում է նաև վաճառողների կողմից ներկայացված հայտարարություններով:

11. Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 05.06.2014 թ-ի օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվել է, որ անմիջական արտադրող կամ ներմուծող չհանդիսացող պարտադիր դրոշմավորման ենթակա թեյ, սուրճ, ձեթ վաճառող անձանց կողմից մինչև 2014թ. հունվարի 1-ը ձեռք բերված չդրոշմավորված ապրաքանները կարող են վաճառվել մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը, իսկ 2014թ. հոկտեմբերի 1-ից հետո ձեռք բերված չդրոշմավորված ապրանքների վաճառքի թույլատրված ժամկետ չի սահմանվել: Այսինքն, ստուգումն իրականացնող անձինք պետք է առանձնացնեին տարբեր ժամանակներում կոոպերատիվի կողմից ձեռք բերված ապրանքները ժամանակագրական կարգով, քանի որ 2014թ. հունվարի 1-ից և 2014թ. հոկտեմբերի 1-ից հետո ձեռք բերված ապրանքների համար գործում են դրանց սպառման տարբեր ժամկետներ:

12. Հարկ է նշել նաև, որ առգրավման արձանագրություններից և ակտից պետք է հանվեին Սննդի անվտանգության մասին, ինչպես նաև Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքներով սահմանված պիտանելիության ժամկետները անցած, ժամկետները չանցած, բայց վաճառքի ոչ ենթակա, ինչպես նաև չգնապիտակավորված ապրանքները, ինչը սակայն չի արվել:

Հաշվի առնելով վերը նշվածը խնդրում եմ անվավեր ճանաչել Կապանի ՏՀՏ 27.04.2015թ. թիվ 6104127 ակտը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 05.03.2015թ. թիվ 6104127 հանձնարարագրի «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության և հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 27.04.2015 թ-ի թիվ 6104127 ակտը (այսուհետ նաև ակտ):

Ակտով մասնավորապես արձանագրվել է, որ ընթացիկ հսկողության բաժնի պետ Արմեն Ստեփանյանի կողմից 01.04.2015 թ-ին ժամը 15:32-ին ք.Կապան, Շահումյան 38 հասցեում գտնվող «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ին պատկանող խանութից կատարվել է գնամ 3870 դրամ ընդհանուր արժեքով՝ 1 հատ (0.6 կգ) հաց 240 դրամ, 1 տուփ «Ակբար» տեսակի թեյ 600 դրամ, 1 տուփ «Ահմադ» տեսակի թեյ 830 դրամ, 1 շիշ (5L) «Բյուրեղ» տեսակի ջուր 450 դրամ, 1 շիշ (2լ) «Չոլոտա» տեսակի ձեթ 1750 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: ԱԿ-ի վաճառողուի Նարինե Հայրապետյանի կողմից տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչ Վարդան Գրիգորյանի կողմից 01.04.2015 թ-ին ժամը 15:40-ին ք.Կապան, Մ.Պապյան 26 հասցեում գտնվող «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ին պատկանող խանութից կատարվել է գնում 1200 դրամ ընդհանուր արժեքով՝ 2 տուփ «Ակբար» տեսակի թեյ 600 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: ԱԿ-ի վաճառողուի էմմա Բաբայանի կողմից տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ընթացիկ հսկողության բաժնի հարկային տեսուչ Կարեն Քարամյանի կողմից 01.04.2015 թ-ին ժամը 15:42-ին ք.Կապան, Բաղաբերդ 7 հասցեում գտնվող «Գեղեցիկ Քնար» Ա/Կ-ին պատկանող խանութից կատարվել է գնում 2340 դրամ ընդհանուր արժեքով՝ 1 շիշ «Զերմուկ» հանքային ջուր 180 դրամ, 1 շիշ «Ֆանտա» ըմպելիք 280 դրամ, 1 տուփ «Ահմադ» տեսակի թեյ 830 դրամ, 1 տուփ «Ակբար» տեսակի թեյ 600 դրամ, 1 տափ «Ռոյալ Արմենիա» տեսակի աղացած սուրճ 450 դրամ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Վաճառողուհի Անահիտ Մարտիրոսյանի կողմից տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Ընթացիկ հսկողության բաժնի ավագ հարկային տեսուչ Գոռ Անդրեասյանի կողմից 01.04.2015 թ-ին ժամը 15:39-ին ք.Կապան, Հ.Ավետիսյան 4 հասցեում գտնվող «Գեղեցիկ Քնար» Ա/Կ-ին պատկանող խանութից կատարվել է գնում 1430 դրամ ընդհանուր արժեքով՝ 1 տափ «Ահմադ» տեսակի թեյ 830 դրամ և 1 տուփ «Ակբար» տեսակի թեյ 600 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Կ-ի վաճառողուհի Մարգարիտա Սաֆարյանի կողմից տրամադրվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն:

Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ «Գեղեցիկ Քնար» Ա/Կ-ի խանութներում առկա են, մասնավորապես՝ ք.Կապան, Շահումյան 38 հասցեում՝ 36150 դրամի, ք.Կապան, Մ.Պապյան 26 հասցեում՝ 49640 դրամի, ք.Կապան, Բաղաբերդ 7 հասցեում՝ 71720 դրամի, ք.Կապան, Հ.Ավետիսյան 4 հասցեում՝ 105470 դրամի, ընդհանուր՝ 262980 դրամի չափով (ապրանքները անվանական, քանակային և գումարային նշված է կից արձանագրություններում) դրոշմապիտակով պարտադիր դրոշմավորման ենթակա չդրոշմավորված վաճառքի համար ցուցադրված ապրանքներ: Նշված ապրանքները ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ի տնօրինություն են վերցվել և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Ակտի համաձայն «Գեղեցիկ Քնար» Ա/Կ-ի կողմից խախտվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջները:

Բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ ստուգումն իրականացնող անձինք իրավունք չունեին ստուգման ընթացքում գնումներ կատարելու, ինչպես նաև, որ «Գեղեցիկ Քնար» Ա/Կ-ի նախագահին կամ փոխարինող պաշտոնատար անձին չի ներկայացվել ստուգման հանձնարարագրի օրինակը, հարկ է նշել հետևյալը:

2 «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների, հսկիչ նշանների (դրոշմապիտակների) և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների կողմից ապրանքներ ձեռք բերելու գործարքների փաստաթղթավորման, ... , չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումների դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային (տարածքային) տեսչության պետին»:

Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ վիճակախաղերի, ..., հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների, հսկիչ նշանների

(դրոշմապիտակների) և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, ... իրականացվող ստուգումների»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի կողմից 05.03.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6104127 հանձնարարագիրը, որի համաձայն «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը սահմանված կարգով ձևակերպելու ճշտության, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության և հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգումներ:

Ինչ վերաբերվում է ստուգման հանձնարարագիրը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ փոխարինող պաշտոնատար անձին չներկայացվելու վերաբերյալ բողոքաբերի պնդումներին, ապա այդ կապակցությամբ նշվեց, որ «Գեղեցիկ Քնար» ԱԿ նախագահի համապատասխան հրամանով կոոպերատիվի գլխավոր հաշվապահի վրա են դրվել տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին փոխարինող պաշտոնատար անձի պարտականությունները, որին և ստուգումն սկսվելու առաջին իսկ օրը ներկայացվել է վերոգրյալ հանձնարարագրի օրինակը: Մասնավորապես, 05.03.2015 թ-ի թիվ 6104127 հանձնարարագրի դարձերեսին առկա է «Գեղեցիկ Քնար» ԱԿ գլխավոր հաշվապահի գրառումն այն մասին, որ նրա կողմից 01.04.2015 թ-ին ստացվել է հանձնարարագրի օրինակը: Հետևապես, բողոքում բերված պնդումները հանձնարարագրի օրինակը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին չներկայացվելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Բողոքում բերված հաջորդ պնդումների վերաբերյալ, որ ակտում նշվել է «բռնագանձում» արտահայտությունը, նշվեց, որ իրականում «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ի համապատասխան խանութներից ոչ թե բռնագանձվել են դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմապիտակավորված ապրանքներ, այլ դրանք ի տնօրինություն են վերցվել: Այդ մասին են վկայում նաև ապրանքներն ի տնօրինություն վերացնելու վերաբերյալ կազմված արձանագրությունների վերնագրերը, այն է՝ Արձանագրություն իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող ապրանքներ վերցնելու մասին:

Նիստի ընթացքում «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ի նախագահի հնչեցրած այն պնդումների վերաբերյալ, որ ստուգումն իրականացնող անձինք իրավասու չէին առանց իր կամ իրեն փոխարինող պաշտոնատար անձի ներկայության ապրանքներ վերցնել, նշվեց հետևյալը:

Ակտում նշված «Գեղեցիկ Քնար» ԱԿ համապատասխան հասցեներում գտնվող խանութներից դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմապիտակավորված ապրանքներ ի տնօրինություն վերցնելու վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնցում «Ապրանքների նկատմամբ օրենքով բավարար իրավունքներ ունեցող անձ կամ նրա ներկայացուցիչ» մասում նշված են վաճառողուհիների տվյալները (անունը, ազգանունը) և ստորագրված են վերջիններիս կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում վաճառողուհիները, որոնց վստահվել է խանութներում գտնվող ապրանքների վաճառքը, ըստ էության, հանդիսանում են վաճառվող ապրանքների նկատմամբ բավարար իրավունքներ ունեցող անձինք կամ նրանց ներկայացուցիչները: Բացի այդ, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ վերոգրյալ ապրանքներն ի տնօրինություն վերցնելու հանգամանքը հեռախոսազանգի միջոցով (այդ պահին կոոպերատիվի նախագահը գտնվել է Երևանում) համաձայնեցվել է «Գեղեցիկ Քնար» ԱԿ նախագահի հետ և միայն վերջինիս համաձայնությունը ստանալուց հետո են

վաճառողուհիների կողմից ստորագրվել իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող ապրանքներ վերցնելու մասին արձանագրությունները: Այսինքն կարելի է փաստել, որ ապրանքներն ի տնօրինություն են վերցվել կոոպերատիվի նախագահի համաձայնությամբ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել նաև, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28.2-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դրոշմավորման ենթակա չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված դրոշմանիշներով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների և սույն օրենքի 26 հոդվածով նախատեսված ապօրինի գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների իրացման դեպքերում այդ ապրանքները ենթակա են ոչնչացման (դրանց՝ այդ ապրանքային տեսքով շրջանառությունից դուրս բերման) հարկային մարմինների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 05.03.2015 թ-ի թիվ 6104127 հանձնարարագրի համաձայն «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ում իրականացված ստուգման արդյունքներով հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքներ, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ոչնչացվելու նպատակով դուրս են բերվել շրջանառությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Գեղեցիկ Քնար» ԱԿ-ում համապատասխան ստուգումներն իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 27.04.2015 թ-ի թիվ 6104127 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ